

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐ ԱՆԹԻԼԻԱՍԻՑ

18 հուլիսի 1986 թ.

Ձեզ խորապես շնորհակալություն ենք հայտնում հայրական ընդունելության և հոգատարության համար, որ Ձերդ Սրբությունը ցույց տվեց մեր պատգամավորներին: Աշճյան Սրբազանը և Պարոն Արզումանյանն իրենց վերադարձին Մեզ տեղեկացրին բոլոր խոսակցությունների ընթացքում տիրող սիրո և միության շատ լավ ոգու մասին:

Մենք շարունակելու ենք գործել համաձայնության և համագործակցության ճանապարհին՝ մեր Մայր Եկեղեցու անսասան միությունն ամրապնդելու համար: Սպասում ենք Ձերդ Սրբության բարի լուրերին եղբայրական հարաբերությունների հետապնդման և առաջացման համար Կաթողիկոսական երկու Աթոռների միջև, միակ Եկեղեցու և մի ազգի ծառայության մեջ:

Եղբայրական սիրով,

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ